ք. Երևան 17.06.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ № 1

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

տնօրեն Սուրեն Նազինյանի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լաբորատոր նյութերի ու պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/4» ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն 3, 10, 13, 34-36, 41-43 և 45 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ն, որի 2023 թվականի դեկտեմբերի 15-ից ընկերության տնօրեն է հանդիսանում 100% բաժնեմասի սեփականատեր Արթուր Ռոբերտի Շեգունցը:

Ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցի և «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցը հանդիսանում է «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասին սեփականատեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Ընդ որում, գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Միաժամանակ, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վար ՀՀ լիազոր մարմինը (այսուհետ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն) մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Ուսումնասիրելով Օրենք 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, հիմք ընդունելով «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/4» ընթացակարգի սահմանված պատասխանատու ստորաբաժանման կողմից 17.05.2024 թվականի զեկուցագիրով «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով ներկայացված փաստերը, ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) տնօրենի կողմից 31.05.2024թ. «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ին ուղղված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը և 03.06.2024 թվականին որակավորման ու պայմանագրի ապահովման վճարման ծանուցումների ներկայացնումը Մատակարարի սպասարկող բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ),

որին ի պատասխան 05.06.2024թ. Բանկից ստացվում է հաշվի մնացորդի ոչ բավարար լինելու մասին գրությունը և առաջնորդվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար:
2. «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ի ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

Մասնակցի						
			Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառվելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիր
Անվանումը	ՀՎՀՀ/Ֆիզ.անձի դեպքում հանրային ծառայության համարանիշ	Գործունեության հասցե	Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<ԼԻՆԱՐԵ ՄԵԴ>> ՍՊԸ	ՀՎՀՀ 01063047	Ք.Երևան Նանսենի 7/43	Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը	-	-	Տնօրենի 17.06.2024թ. կայացրած որոշում և գնման ընթացակարգի ծածկագիր՝ ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/4

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՆԱԶԻՆՅԱՆ